Կանոնակարգ

4/2-17-Լ 26 января, 2017

Принимающее лицо **Ученый совет**

Статус **Работает**

ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՈՐԱԿԻ ԵՎ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ ուսանողների հարցման (այսուհետև՝ ուսանողների հարցում) կանոնակարգը սահմանում է ԵՊՀ ուսանողների կողմից համալսարանի դասախոսական կազմի դասավանդման որակի և արդյունավետության գնահատման, հարցման անցկացման և արդյունքների օգտագործման կարգը:

1.2. Ուսանողների հարցումն անցկացվում է «Կրթության մասին» ՀՀ օրենքի և ԵՊՀ կանոնադրության պահանջների համաձայն և համարվում է ԵՊՀ ուսանողների ուսուցման որակն ապահովող գործառույթներին մասնակցելուև դասախոսական համակազմի գործունեության արդյունավետությունը գնահատելու իրավունքի դրսևորում:

1.3. Սույն կանոնակարգը հաստատում և դրանում փոփոխություններ ու լրացումներ կատարում է ԵՊՀ գիտական խորհուրդը:

2. ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԱՐՑՄԱՆ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Ուսանողների հարցումն իրականացվում է առցանց եղանակով, յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանից հետո հետևյալ ժամկետներում.

1-ին կիսամյակից հետո՝ փետրվարի 5-ից մինչև փետրվարի 20-ն ընկած ժամանակահատվածում՝ առկա ուսուցմամբ սովորողների համար և մարտի 10-ից մինչև մարտի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

2-րդ կիսամյակից հետո՝ հուլիսի 1-ից մինչև սեպտեմբերի 7-ն ընկած ժամանակահատվածում՝ առկա և հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

Ավարտական կուրսում հարցումն անցկացվում է ապրիլի 10-ից մինչև ապրիլի 17-ն ընկած ժամանակահատվածում՝ առկա ուսուցմամբ սովորողների համար և մայիսի 8-ից մինչև մայիսի 15-ն ընկած ժամանակահատվածում՝ հեռակա ուսուցմամբ սովորողների համար:

2.2. Հարցմանն ուսանողը կարող է մասնակցել ցանկացած վայրից՝ օգտվելով ԵՊՀ ուսանողական անհատական վիրտուալ տիրույթից, մուտք գործելով համալսարանական իր էլեկտրոնային փոստ:

2.3. Ուսանողների
հարցումն անցկացվում է սույն կանոնակարգին կցված գնահատման հարցաթերթով (հավելված 1), որում ուսանողը 1-5 միավորանոց գնահատման սանդղակով պատասխանում է առաջադրված հարցերին:

2.4. Գնահատման արդյունքները ներկայացվում են յուրաքանչյուր դասախոսի համար հաշվարկված գնահատականների միջին թվաբանականով (միջին թվաբանականը հաշվարկվում է
ըստ առանձին դասընթացների և հարցերի, որը մատնանշում է տվյալ դասախոսի վարկանիշը հարցման մասնակիցների տվյալ խմբում) և միջին քառակուսային շեղումով (միջին քառակուսային շեղումը ցույց է տալիս գնահատումների շեղման չափը միջին թվաբանականից. որքան մեծ է միջին քառակուսային շեղումը, այնքան հարցման մասնակիցների անհատական գնահատումները ավելի լայն տիրույթում են ցրված):

2.5. Հարցաթերթի ձևանմուշն ունի տեղեկատվության հատված, որի հարցերը յուրաքանչյուր կիսամյակի համար սահմանվում են ռեկտորի կողմից:

2.6. Հարցումը կազմակերպում և վերահսկում են ԵՊՀ ուսումնամեթոդական վարչությունը և ֆակուլտետները:

2.7. Ուսանողները հարցաթերթի՝ կարծիքների և առաջարկների համար հատկացված բաժնում կարող են նաև ներկայացնել դասավանդման որակի և ուսումնական գործընթացի բարելավման վերաբերյալ իրենց առաջարկները, ինչպես նաև կարծիք հայտնել յուրաքանչյուր դասախոսի աշխատանքի վերաբերյալ:

3. ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1. Ուսանողների հարցման արդյունքները ամփոփվում են ԵՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնում:

3.2. Հարցման արդյունքները յուրաքանչյուր կիսամյակ քննարկվում են համապատասխան ամբիոններում, այնուհետև ֆակուլտետի գիտական խորհրդի նիստում: Քննարկման արդյունքում մշակվում են համապատասխան առաջարկություններ և երաշխավորություններ՝ ուղղված դասախոսի դասավանդման որակի բարեալվմանը:

3.3. Հարցման արդյունքները ուստարվա վերջում ամփոփված ներկայացվում են ԵՊՀ գիտական խորհրդում:

3.4. Դասախոսն իրավունք ունի ամբիոնի վարիչից ստանալու իրեն վերաբերող գնահատականներն ու կարծիքները և ծանոթանալու դրանց:

3.5. Ուսանողների հարցման արդյունքներն օգտագործվում են՝

1) դասախոսի ինքնավերլուծության իրականացմանը և նրա կողմից դասավանդման մոտեցումների և կիրառվող մեթոդների շարունակական բարելավմանն աջակցելու նպատակով,

2) դասախոսի պաշտոնի տեղակալման, առաջխաղացման և խրախուսման վերաբերյալ որոշում կայացնելու նպատակով,

3) դասախոսին լրավճար վճարելու նպատակով:

3.6. Հարցման արդյունքներն օգտագործվում են միայն ամփոփ տեսքով, իսկ անհատական տվյալների գաղտնիությունը երաշխավորվում է:

Հավելված 1_7.pdf

Սույն փաստաթուղթը բեռնվել է ԵՊՀ փաստաթղթերի պաշտոնական հրապարակման կայքից
https://www.ysu.am/documents-categories

Адрес: Республика Армения, г. Ереван, 0025, Алека Манукяна, 1
(+37460) 710000
info@ysu.am